

## ՓՈԽԸՄԲՈՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև սեյսմիկ պաշտպանության բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության տարածքները բնութագրվում են բարձր սեյսմիկ ակտիվությամբ, և ուժեղ երկրաշարժերը երկու երկրներում առաջ են բերում զանգվածային ավերածություններ և մեծաքանակ մարդկային կորուստներ, որը մեծ վտանգ է ներկայացնում մարդկանց կյանքի և զարգացման համար և պայմանավորված է երկրաշարժամետ տարածքների շարունակական քաղաքայնացմամբ, սեյսմոգեն աղբյուրներում ուժեղ երկրաշարժերի կրկնությամբ, հետևյալ ուժեղ սեյսմիկ իրադարձությունների բարձր հավանականությամբ, փաստացի սեյսմիկ վտանգի առնչությամբ գոյություն ունեցող շենքերի և կառույցների ցածր սեյսմիկ դիմադրողականությամբ, բնակչության, տեղական և պետական կառավարման մարմինների ոչ բավարար պատրաստվածությամբ և շատ այլ պատճառներով, որոնք հանգեցնում են երկու երկրների բարձր սեյսմիկ խոցելիությանը և ազդում նրանց կայուն զարգացման վրա,

ընդունելով երկու երկրների անվտանգության և կայուն զարգացման ապահովման նպատակով համակարգված աշխատանքների անցկացման անհրաժեշտությունը՝ Կողմերը պայմանավորվում են հետևյալի մասին.

### Հոդված 1

Կողմերը պայմանավորվում են սույն Փոխըմբռնման հուշագրին, իրենց երկրների օրենսդրությանը և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, իրականացնել համագործակցություն սեյսմիկ պաշտպանության բնագավառում:

### Հոդված 2

Կողմերը սույն Փոխըմբռնման հուշագրով նախատեսվող համագործակցությունը կիրականացնեն մասնավորապես հետևյալ ոլորտներում՝

սեյսմիկ ռիսկի նվազեցման ընդհանուր ռազմավարություն,

սեյսմիկ ռիսկի նվազեցման գիտական, տեխնոլոգիական և սոցիալտնտեսական ուղղություններ,  
սեյսմիկ պաշպանության վերաբերյալ օրենքների և կանոնակարգերի մշակում,  
սեյսմիկ ռիսկի նվազեցման կառավարում՝ ընդգրկելով տեղական համայնքները, պետական կառավարման մարմինները և միջպետական համաձայնագրերը,  
սեյսմիկ ռիսկի նվազեցման և պաշտպանության տարածաշրջանային մարմնի հիմանդրում:

### Հոդված 3

Սույն Փոխընթացման հուշագրի կատարման իրականացումը հանձնարարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնին և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնին: Հայաստանի և Իրանի համապատասխան մարմինների համակարգման ժողովը պետք է կայանա առնվազն տարին մեկ անգամ:

Յուրաքանչյուր Կողմ նշանակում է մեկ պատասխանատու անձ, որը վերահսկում է սույն Փոխընթացման հուշագրի կատարման ընթացքը: Նրանք պետք է ունենան տարեկան առնվազն մեկ հանդիպում Հայաստանում կամ Իրանում սույն Փոխընթացման հուշագրի կատարման առաջընթացը և յուրաքանչյուր հաջորդ տարվա գործունեության հատուկ պլանը քննարկելու համար:

### Հոդված 4

Կողմերը ձևավորում են մասնագետների համատեղ աշխատանքային խմբեր և մասնակցում Հայաստանի Հանրապետության մարզերի և Իրանի Իսլամական Հանրապետության երկրաշարժամետ նահանգների համար համատեղ հետազոտական նախագծերի և նորմատիվային փաստաթղթերի մշակմանը՝ հետևյալ ուղղություններով.

սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատում,  
սեյսմիկ վտանգ և գետտեխնիկական միկրոշրջանացում,  
քաղաքային բնակավայրերում խոցելիության նվազեցում՝ ներառյալ գոյություն ունեցող շենքերի և շինությունների ուժեղացումն ու բարելավումը,  
բնակչության իրազեկում, մարդկանց կրթություն և ուսուցում,  
վաղ ահազանգում և տեղեկացում, ուժեղ երկրաշարժերի մասին տեղեկատվության արագ փոխանակում,  
ռիսկի կառավարում՝ ներառյալ արագ արձագանքումը և փրկարարական գործողությունները,

աղետի հետևանքների վերացում և մարդկանց վերականգնողական աշխատանքներ, ապահովագրություն, գործընկերություն՝ պետական և մասնավոր կազմակերպությունների ներգրավմամբ, ազգային ծրագրերի միջազգայնացում՝ միջազգային լայնածավալ համագործակցության հիման վրա:

#### Հոդված 5

Կողմերը սեյսմիկ վտանգի գնահատման և սեյսմիկ ռիսկի նվազեցման բնագավառում տեղեկատվություն են փոխանակում գիտական և տեխնիկական արդի նվաճումների վերաբերյալ (առանձին համաձայնագրերի համաձայն): Կողմերը կազմակերպում են համատեղ հետազոտությունների արդյունքների հրատարակում: Կողմերը մասնակցում են համատեղ միջազգային նախագծերին և ծրագրերին:

#### Հոդված 6

Կողմերը որոնում են համատեղ նախագծերի ֆինանսավորման աղբյուրներ միջազգային տարբեր հիմնադրամներից: Սույն Փոխընթերցման հուշագրով նախատեսված համատեղ գործողությունները կատարվում են համապատասխան անձնակազմի և ֆինանսավորման առկայությամբ: Կողմերը, յուրաքանչյուր նախագիծ սկսելուց առաջ պետք է գրավոր համաձայնեցնեն ֆինանսական պայմանավորվածությունները:

#### Հոդված 7

Համատեղ գործողություններից ստացված արդյունքները հանդիսանում են Կողմերի սեփականությունը և կարող են փոխանցվել երրորդ կողմի միայն երկու Կողմերի համաձայնության դեպքում:

#### Հոդված 8

Կողմերը համաձայնում են, որ իրենց մարմինների կողմից լիազորված ներկայացուցիչները կարող են առանձին համաձայնագրեր կնքել ինչպես միմյանց, այնպես էլ իրենց երկրների պետական կառավարման մարմինների հետ: Սույն Փոխընթերցման հուշագրում Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են առանձին Արձանագրությամբ: Արձանագրությունն ուժի մեջ է մտնում սույն Փոխընթերցման հուշագրի

ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով և հանդիսանում է նրա անբաժանելի մասը:

## Հոդված 9

Սույն Փոխընթացման հուշագիրն ուժի մեջ է մտնում դրա համար անհրաժեշտ՝ Կողմերի ներպետական օրենսդրությամբ նախատեսված ներպետական ընթացակարգերի կատարման մասին երկրորդ ծանուցումը դիվանագիտական ուղիով ստանալու օրվանից:

Սույն Փոխընթացման հուշագիրը գործում է 5 տարի ժամկետով: Սույն Փոխընթացման հուշագրի գործողությունը հետագայում ինքնաբերաբար կերկարաձգվի հնգամյա ժամկետներով, մինչև Կողմերից մեկը սույն Փոխընթացման հուշագրի գործողության ժամկետը լրանալուց առնվազն 6 ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցի դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Սույն Փոխընթացման հուշագրի գործողությունը կարող է կասեցվել և դադարեցվել ցանկացած ժամանակ՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ նրանց ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով՝ միմյանց պարտադիր ծանուցելով դադարեցման ժամկետի մասին:

Սույն Փոխընթացման հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել մի Կողմի դադարեցման մտադրության մասին ծանուցագիրը մյուս Կողմին հանձնելուց 12 ամիս հետո:

Սույն Փոխընթացման հուշագրի գործողության դադարեցումը չի ազդում նման դադարեցումից առաջ դրա համաձայն սկսած նախագծերի վավերականության կամ ընթացքի վրա:

Կատարված է Թեհրան քաղաքում 2001 թվականի դեկտեմբերի 27-ին երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, պարսկերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Փոխընթացման հուշագրի դրույթների մեկնաբանման ժամանակ ծագած տարաձայնությունների դեպքում Կողմերը կդիմեն անգլերեն լեզվով տեքստին:

Փոխընթացման հուշագիրն ուժի մեջ է մտել 2002 թվականի մայիսի 22-ից: